

ԱՅԼԵՒԱՅԼՔ**ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ**

15 Յունուար, 2019-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորական նամակ յղեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ Տիար Նիկոլ Փաշինեանի: Նամակին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով նորանշանակ վարչապետը՝ կ'ըսէ. «Կ'աղօթենք, որ ստանձնելով վարչապետի պատասխանատու պաշտօնը իրականացնէք մեր ժողովուրդի ակնկալիքները՝ կայունացնելու Հայաստանի ու Արցախի զոյգ պետականութիւնները, բարձրացնելու Հայոց Բանակի մարտունակութիւնը, զարգացնելու տնտեսութիւնն ու բարելաւելու մեր հայրենակիցներու ընկերային պայմանները: Կը շնորհաւորենք Ձեզ եւ կ'աղօթենք Ձեր քաջառողջութեան եւ պարտականութիւններու յաջող կտարման համար»:

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՀԵՄԻ ՄԷՁ

18 Յունուար, 2018-ին, առաւօտեան ժամը 9:30-ին Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ժամբու կիսուն Յունաց Ս. Եղիա վանքին առջեւ Պատրիարք Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին Պէյթ-Սահուրի եւ Պէյթ-Ճալայի քաղաքապետները եւ պետական ներկայացուցիչներ: Իսրայէլեան հինգ ոստիկան ձիաւորներ ընկերացան Պատրիարք Սրբազան Հօր ինքնաշարժին, առջեւէն եւ քովէն, մինչեւ Ռաքէլի գերեզմանը, որմէ ետք թափօրը առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժերէն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները քալելով յառաջացան մինչեւ հրապարակ: Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով Բեթղեհէմի ընդհանուր ոստիկանապետի, քաղաքապետի եւ պաշտօնեաներու կողմէ, նաեւ Հ. Ե. Միութեան եւ Հ.Մ.Ը. Միութեան սկաւառական խումբերէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղօղանջին ներքոյ թափօրը բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկան Բեթղեհէմի քաղաքապետը, ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն:

Յետ միջօրէի ժամը 2-ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր: Ժրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուց Կ. Պոլիսէն ուխտաւորաբար Սուրբ Երկիր ժամանած Գերապատիւ Տ. Թաթուլ Ծ. Վարդապետ Անուշեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք. բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»: Երեկոյեան ժամը 7-ին Ս. Ծննդեան տօնին առիթով տրուած հիւրասիրութեան ներկայ էր նաեւ Պաղեստինի Փոխ-վարչապետ Պրն. Զիադ Քամար:

19 Յունուար, 2018-ին կէս գիշերէն առաջ ժամը 10-ին, Գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը: Պաղեստինի փոխ-վարչապետ Մեծայարգ Տիար Զիադ Քամար եւ կառավարութեան ներկայացուցիչներ եւս ներկայ էին Այրի արարողութեանց